ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 -2022 ուս. տարի

2021 -2022 ուս. տարում շարունակվել է գրադարանի ծառայությունների մատուցման բարելավումն ու ընդլայնումը: Աշխատանքն ակտիվ ու օպերատիվ է եղել հատկապես քննական շրջանում: Պետք է արձանագրեմ, որ տարեց տարի ուսանողների հոսքը ընթերցասրահ ավելանում է: Դա նկատելի էր հատկապես ուսումնական տարվա երկրորդ հատվածում. ակտիվացել է հայ ուսանողների հոսքը: Ավելացել է նաև գրքատայցը, բացվել են բազմաթիվ գրադարանային քարտեր:

Արդեն ավանդույթ է դարձել, որ յուրաքանչյուր տարվա փետրվարի 19-ին գրադարանը պետք է հանդես գա մի նոր մտահղացմամբ: Այս տարի ևս բացառություն չէր. տեղի ունեցավ Գիրք նվիրելու օրվան և ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյանը նվիրված միջոցառում:

Միջոցառման սկզբում ներկաներն ունկնդրեցին Թումանյանի ստեղծագործություններից, այնուհետև ուսանողներին ներկայացվեց օրվա խորհուրդն ու նպատակը: Միջոցառման շրջանակում տարվա լավագույն ընթերցող-ուսանողները պարգևատրվեցին մասնագիտական գրքերով: Օրը հիշարժան էր նաև նրանով, որ ո՛չ միայն ես գրքեր նվիրեցի, այլ նաև գրադարանը համալրվեց նոր գրքերով: Գրադարանին իրենց հեղինակած գրքերը նվիրաբերեցին «Բնագիտական առարկաների» ամբիոնի դասախոս Նելլի Ղուկասյանը և ԱԲՀ ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտոր, բ.գ.թ. Արայիկ Գյոզալյանը:

Երկարաձգվել է համագործակցությունը «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիայի», ինչպես նաև մի շարք էլեկտրոնային շտեմարանների հետ: Ամբողջական տեղեկատվությունը տեղադրվել է կայքէջում:

Այս ուսումնական տարում ուսումնասիրել եմ բոլոր բուհերի գրադարանների կանոնադրությունները, կազմել ու ԱԲՀ ռեկտորի հաստատմանն եմ ներկայացրել ԱԲՀ գրադարանի նոր կանոնադրությունը՝ ներառյալ գրադարանից օգտվելու կանոնները:

Հիմնովին փոփոխության է ենթարկվել կայքէջում «Գրադարան» բաժինը: Համապատասխան կոնտենտ եմ գրել կայքէջյան «Գրադարանի» համար ձևավորված 5 կատեգորիաներում տեղադրելու նպատակով՝ «Գրադարանի մասին», «Գրադարանից օգտվելու կանոնները», «ԱԲՀ գրքեր», «Պարբերականներ» և «Էլեկտրոնային գրացուցակ»: Հիշյալ աշխատանքների շնորհիվ կայքի այցելուն մանրամասն կարող է ծանոթանալ է գրադարանի բաժանորդ դառնալու և ընթերցողական քարտ ստանալու կարգի, պայմանների, ընթերցողի պարտականությունների և այլնի մասին:

«Էլեկտրոնային գրացուցակ» կազմելու ուղղությամբ հիմնական աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

Գրադարանավար՝ / / Աննա Ավետյան